

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ
ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИ МАРЗ
ЭЧМИАДЗИНСКИ РЕГИОН
СЕЛЬСКАЯ ОБЩИНА АМБЕРД

N 01-98
«07» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2011թ

ՀԵՌ.(093) 32-59-62
ՏԵԼ.(093) 32-59-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝ Ա. Ղահրամանյան


Կից ներկայացնում ենք Ձեզ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի հոկտեմբեր ամսվա ընթացքում արձակած կարգադրությունները և ընդունած որոշումները:


Առդիր 4 թերթ:

Համայնքի ղեկավար



Մ. Բաբայան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8-Ա**

«25» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011թ.

Գ. ԱՄԲԵՐԴ


ՍԱՄՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի առաջին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի Մարզի Ամբերդ համայնքի ղեկավարի 2009 թվականի ապրիլի 20-ի թիվ 1-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Սամվել Սարգսյանի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի անձնական դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար՝ Սամվել Սարգսյանին տրամադրել ամենամյա արձակուրդ, 24 աշխատանքային օր (20 նվազագույն և 4 լրացուցիչ) տեվողությամբ, սկսած 2011 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2011 թվականի դեկտեմբերի 2-ը ներառյալ:
2. Աշխատանքային պարտականությունները նշյալ ժամանակահատվածում դնել համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Գայանե Նավասարդյանի վրա:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավարի



Ս. Բաբայան

2011 թվականի հոկտեմբերի 25
գ. Ամբերդ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՄԲԵՐԴ ՀԱՍԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16-Ա

«10» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011Թ.

Գ. ԱՄԲԵՐԴ

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԳԱՐԻԵԼ ՆՈՐԱՅՐԻ ԲԵՅԲՈՒԹՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի Վ. Կովալի փողոցի 12 տան բնակիչ՝ Ռուշան Վասյայի Ղարիբյանը դիմել է իր կնոջ եղբոր՝ անչափահաս երեխայի՝ Գաբրիել Նորայի Բեյբությանի /ծնվ. 04.10.1995թ./ նկատմամբ հոգաբարձու ճանաչելու մասին:

Գաբրիել Նորայի Բեյբությանի ծնողները՝ Նորայր Ռաֆիկի Բեյբությանը և Մարետ Նորիկի Սուրադյանը բացակայում են Հայաստանի Հանրապետությունից:

Գործում կան անհրաժեշտ փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով անչափահասի շահերն ու տարիքը, հիմք ընդունելով գյուցապետարանի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 1 նիստի արձանագրությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 134 և 135-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 35 և 37-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի Վ. Կովալի փողոցի 12 տան բնակիչ՝ Ռուշան Վասյայի Ղարիբյանին նշանակել իր կնոջ եղբոր՝ անչափահաս որդու՝ Գաբրիել Նորայի Բեյբությանի /ծնվ. 04.10.1995թ./ նկատմամբ հոգաբարձու:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար



Ս. Բարայան

2011 թվականի հոկտեմբերի 10

Գ. Ամբերդ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15-Ա

«03» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011թ.

Գ. ԱՄԲԵՐԴ

2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման
նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի N 15-N հրամանով
հաստատված «Համայնքային ծառայողի ատեստավորման կարգի»
12-րդ կետերով.


ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ամբերդի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր
պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող աշխատակազմի
համայնքային ծառայողների ցուցակը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար
2011 թվականի հոկտեմբերի 3
Գ. Ամբերդ



Մ. Բաբայան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՑՄԱՐՑՈՒ 3-Ի
ԹԻՎ 15-Ա ՀՐԱՄԱՆԻ

ՁՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ

1. Սարգսյան Սամվել - աշխատակազմի քարտուղար (1.2-1)